«29» ապրիլի 2003թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ապրիլի 2003 թվականի N 407 -Ն

38 9
05 05 03

«ՀԱՏՈՒԿ ԿԱՑԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության «Հատուկ կացարան» պետական հիմնարկը վերակազմավորման ձևով վերակազմակերպել «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպության: «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Հատուկ կացարան» պետական հիմնարկի իրավահաջորդը համաձայն փոխանցման ակտի:

2. Սահմանել, որ

ա) «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ հայցողներին «Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուց հետո ժամանակավորապես հատուկ կացարանում տեղավորելը.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ հայցողների բժշկական զննման, փաստաթղթային ստուգման, թարգմանչական, իրավական խորհրդատվության անվճար ծառայությունների մատուցման, բժշկական օգնության և սպասարկման ապահովման աշխատանքների կազմակերպումը.

բ) «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևերով:

3. «Հատուկ կացարան» պետական հիմնարկի տնօրինության՝ պետական սեփականություն հանդիսացող գույքը, բացառությամբ շենքերի, շինությունների, պատմամշակութային նշանակության և նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

«Հատուկ կացարան» պետական հիմնարկի տնօրինության՝ 310 քառ. մետր տարածք ունեցող, 633335 դրամ հաշվեկշռային արժեքով շենքերը, շինությունները, պատմամշակութային նշանակության և նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործման պայմանով՝ Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարության հետ կնքվելիք պայմանագրերի հիման վրա:

4. «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե» և «է» կետերով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությանը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության պետին՝ մեկամսյա ժամկետում հաստատել

կանության իրավունքով հանձնվող և ամրացվող գույքի կազմը.

բ) «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունն ու այն սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

6. «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեով «Հատուկ կացարան» պետական հիմնարկի համար նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2003 թ. ապրիլի 21
Երևան

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ Նոր Նորք ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 07.07.2003թ.
գրանցման թիվ 282 210 04743
վկայական 03Ա 060495
Թիվ „03„ 2 „ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
Նոր Նորք տարածքային բաժնի կողմից
11. 06. 2010թ.
տ/բ պետ Ա.Հովհաննիսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
2010թվականի ապրիլի 27-ի N 42-Ա
հրամանով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
«ՀԱՏՈՒԿ ԿԱՑԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Հավելված N 1
ՀՀ տարածքային կառավարման նախարարության
միգրացիոն պետական ծառայության պետի
2010թ. ապրիլի 27-ի N 42-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՑԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ պետական կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց (այսուհետ՝ հայցող) ժամանակավորապես բնակելի տարածքներ տրամադրելու, դրանցում նրանց կեցությունը ապահովելու նպատակով:

2.Պետական կազմակերպությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը:

Պետական կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

Պետական կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

3.Պետական կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Պետական կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

4.Պետական կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

5.Պետական կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ինչպես նաև իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6.Պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ չի կարող զբաղվել:

7.Պետական բյուջեով պետական կազմակերպության համար ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում պետական կազմակերպության կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով: Պետական կազմակերպության կողմից պետությանն այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

8.Պետական կազմակերպությունը հարկեր, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

9.Պետական կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

10.Պետական կազմակերպության ֆինանսական գործունեությունը երբեմն է վերստուգման (աուդիտ)՝ լիազորված պետական մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության ստորաբաժանման կողմից:

11.Պետական կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

12. Պետական կազմակերպության անվանումն է՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Պետական կազմակերպության կրճատ անվանումն է՝ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՀԿ ՊՈԱԿ

12. Պետական կազմակերպությանգտնվելու վայրն է՝

ք.Երևան,Սոլոլակի 70/1

II.ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.Պետական կազմակերպության գործունեության նպատակներն են՝

ա. Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան, մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում ընդունելը, լիազոր մարմնի կողմից տրված ուղեգրի հիման վրա պետական կազմակերպությունում տեղավորելը.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապաստան հայցողների կենսաապահովման պայմանների տրամադրման կազմակերպումը.

III. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, Ծառայությունը, գործադիր մարմինը (տնօրենը):

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

1. Պետական կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կառավարությունն է, որն ունի պետական կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

2.Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) պետական կազմակերպության հիմնադրումը.

բ) պետական կազմակերպության գործունեության առակայի և նպատակների սահմանումը.

գ) պետական կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

դ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ծառայությունն իրականացնում է պետական կազմակերպությանը ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

ա) հաստատում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը.

բ) հաստատում է պետական կազմակերպության կանոնադրությունը և դրանում փոփոխություններ կատարելը.

գ) սահմանում է պետական կազմակերպության կառավարման համակարգը.

դ) նշանակում է պետական կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում է լուծարման հաշվեկշիռը.

ե) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է պետական կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

զ) իրականացնում է պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

է) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

ը) լսում է պետական կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

թ) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

ժ) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության առաջարկությամբ համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

ժա) հաստատում է պետական կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ժբ) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

ժգ) սահմանում է պետական կազմակերպությունում բնակության կարգապահական կանոնները.

ժդ) սահմանում է պետական կազմակերպության կողմից վարման ենթակա ապաստան հայցողների գրանցամատյանների ձևը:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

1.Պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը, որին օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է Ծառայության պետը:

Պետական կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, Նախարարի և Ծառայության պետի հրամաններով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է պետական կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի որոշումների, Նախարարի կամ Ծառայության պետի հրամանների, հրահանգների, կարգադրությունների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2. Պետական կազմակերպության գործադիր տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է Ծառայության պետը:

Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտավորությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները տարածքային կառավարման նախարարության հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.Պետական կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

4.Պետական կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակված անձը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետական կազմակերպությանը և պետությանը պատճառված վնասի համար: Պետական կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չի պատճառում վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

Պետական կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնող անձը պարտադիր է օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից պետական կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի փոխհատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով պետական կազմակերպության կամ պետությանը պատճառված վնասի համար պետական կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցրած պաշտոնատար անձը կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

5. Պետական կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել հիմնադրի, Նախարարի և Ծառայության պետի՝ օրենս-

դրությանը հակասող կարգադրությունները, հրամանները, հրահանգները դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

6. Պետական կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում Ծառայության պետի հրամանի համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Պետական կազմակերպության գործադիր տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս պետական կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ:

բ) օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով, Նախարարի և Ծառայության պետի հրամաններով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում պետական կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ

զ) կատարում էաշխատանքի բաշխում իր աշխատակիցների միջև

է) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ը) իրականացնում է օրենսդրությանը չհակասող և պետական կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

IV ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական կազմակերպությունը՝

1. Ծառայության կողմից տրված ուղեգրի հիման վրա ապաստան հայցողին և նրա ընտանիքի անդամներին /այսուհետ՝ ապաստան հայցողներ/ անհապաղ հատկացնում է սենյակ և նրանց տեղավորում այնտեղ.

2. ապահովում է ապաստան հայցողների բնակությունը իրենց հատկացված սենյակներում՝ մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշումը ընդունվելը /ներառյալ մերժման որոշման բողոքարկման գործընթացի ավարտը/.

3. սենյակ հատկացնելիս հաշվի է առնում ապաստան հայցողների ընտանիքի անդամների թիվը, սեռը, տարիքը և այլ հանգամանքներ.

4. միևնույն ընտանիքին չպատկանող տարբեր սեռի անձանց չի տեղավորում միևնույն սենյակում.

5. ապահովում է ապաստան հայցողներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացումը, այդ թվում՝ պետական կազմակերպությունում բնակվելու ժամկետների, բնակության կարգապահական կանոնների, ՀՀ տարածքում տեղաշարժվելու վերաբերյալ.

6. հատկացված սենյակը ապաստան հայցողի կողմից 7 օր անընդմեջ անհարգելի պատճառով չզբաղեցվելու դեպքում այդ մասին տեղեկացնում է Ծառայությանը.

7. ապահովում է ապաստան հայցողներին տրամադրված սենյակների ազատումը՝ ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 19-ի թիվ 1440-Ն որոշմամբ հաստատված՝ «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսապահովման պայմաններ տրամադրելու կարգով սահմանված ժամկետներում և դեպքերում.

8. ապահովում է ապաստան հայցողներին պետական կազմակերպությունում բնակվելիս կենսապահովման պայմանների՝ սննդի, սպիտակեղենի, անձնական հիգիենայի պարագաների, անհրաժեշտության դեպքում՝ հագուստի և կոշիկի տրամադրումը ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 19-ի թիվ 1440-Ն որոշմամբ հաստատված «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսապահովման պայմաններ տրամադրելու կարգ»-ով սահմանված չափաքանակներով և պայմաններով՝ մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում ընդունվելը /ներառյալ մերժման որոշման բողոքարկման գործընթացի ավարտը/.

9. վարում է կազմակերպությունում բնակվող ապաստան հայցողների վերաբերյալ Ծառայության պետի հրամանով սահմանված ձևի գրանցամատյանները.

10. ապաստան հայցողների տեղավորումը և կենսապահովման պայմանների տրամադրումն իրականացնում է կազմակերպության պահպանման ծախսերի նախահաշվում նախատեսված միջոցների հաշվին.

11. կազմակերպում է ապաստան հայցողների համար արտահիվանդանոցային օգնությունը և սպասարկումը՝ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմանը համապատասխան.

12. դիմում է Ծառայությանը՝ ապաստան հայցողների համար հիվանդանոցային օգնությունը և սպասարկումը կազմակերպելու հարցով ՀՀ առողջապահության նախարարությանը և այլ մարմինների միջնորդություններ ներկայացնելու խնդրանքով.

13. ապահովում է պետական կազմակերպության տարածքի պատշաճ մաքրությունը և հակահրդեհային կանոնների պահպանումը.

14. ապահովում է պետական կազմակերպության տարածքի շահագործումը և սպասարկումը.

15. ապահովում է պետական կազմակերպությունում բնակության կարգապահական կանոնների պահպանումը.

16. յուրաքանչյուր եռամսյակի վերջում Ծառայություն է ներկայացնում հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ.

17. համագործակցում է ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի, միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակների, ապաստան հայցողների հիմնախնդիրներին առնչվող պետական կառավարչական հիմնարկների և հասարակական կազմակերպությունների հետ:

V .ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

1.Պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև պետական կազմակերպության գործունեության ընթացիկ ձեռք բերված գույքից:

2.Պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

3.Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

4.Պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է պետական կազմակերպությունը:

5. Պետական կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

6.Հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

7. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

8. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույք կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

9. Պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավել չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

10. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում պետական կազմակերպության ստացած եկամուտները պետական կազմակերպության սեփականությունն են:

11. Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

1. Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրի:

2. Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

3.Պետական կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

4.Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

5.Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

6.Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

7.Պետական կազմակերպության լուծարման դեպքում պետական կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե: